

նում անգլիացիների ղեմ, փորձում Հնդկական իշխանությունների միասնական հակառակորդին: Միաժամանակ Հայդարը դաշինքի մեջ է մտնում ֆրանսիացիների հետ, այդ նպատակով նա հատուկ պատգամավորություն է ստաբում Փարիզ, որը մեծ հարգանքով է բնորոշվում էյուզովիկոս XVI-ի կողմից:

Հայդար Ալին կարողանում է ամբողջ Մալսորը իր տիրապետության տակ զցել, անգամ իր անունով դրամ թողարկել: Խոսելով երկրորդ անգլո-մալսորական պատերազմի մասին, հայկական աղբյուրը հետաքրքիր տեղեկություններ է հայտնում Հայդարի բանակում անգլիական յրաժա-գործակալների, իսկ վերջում՝ վնասակար մի հակառակորդի և մալսորական բանակի ջախջախման մասին: Յազոբ, հայերի և հայ-Հնդկական հարաբերությունների վերաբերյալ հայկական աղբյուրը գրեթե ոչինչ չի հիշատակում:

Ռ. Արրահամյանը աշխատության վերջում բերում է Ք. Խոջամալյանի «Հնդկաստանի պատմություն» (էջ 115—181) և Հ. Սիմոնյանի «Հայդար Ալի խանի կենսագրությունը» (էջ 195—258) ոչ ծավալուն բնագրերի ուսմանը: Թարգմանությունը՝ համապատասխան ծանոթագրություններով և տեքստաբանական հշոթումներով:

Տեքստերին կցված մեծաքանակ (426) ծանոթագրություններից պարզորոշ երևում է, որ միայն հեղինակի բանասիրական հմտությունը,

այլ նաև նրա քաջատեղյակությունը Հնդկաստանի պատմությանը և անգլիական պատմագրությանը, առանց որի, հասկանալի է, անհնարին կլինեին նման աշխատության ստեղծումը: Ենթահիվ կատարված աշխատանքի, սովետական արևելագիտությունը հնարավորություն է ստանում օգտվելու երկու նոր արժեքավոր աղբյուրներից, որոնք յուսաբանում են XVII դարի Հնդկաստանի պատմության կարևոր գրվածքները: Երախտակի է այն, որ հեղինակը ամենին չի անտեսում, այլ վկայակոչում և բարձր է գնահատում իրենից առաջ այդ թեմային անդրադարձած եվրոպական, հնդկ, ռուս և հայազգի ուսումնասիրողների ծառայությունները:

Արժեքավոր է հատկապես և այն հանգամանքը, որ Ռ. Արրահամյանը լայնորեն օգտագործել է Կ. Մարքսի՝ Հնդկաստանի պատմությանը նվիրված ուսումնասիրությունները և, մասնավորապես, «Ժամանակագրական քաղվածքներ Հնդկաստանի պատմությունից» նշանավոր աշխատությունը: Ուղեցույց ունենալով Կ. Մարքսի ասույթները և վկայակոչելով հայկական աղբյուրները, նա բնագրատում և մերկացնում է Հնդկաստանում Անգլիայի գաղութային քաղաքականությունն արգարացնող անգլիական բուրժուական պատմագրության միասնոր, փաստերը խեղաթյուրված ներկայացնելու նրա փորձերը:

Վ. ԲԱՐԻՍՈՒԴԱՆՅԱՆ

Документы на половецком языке, XVI в. (судебные акты Каменец-Подольской армянской общины). Изд. „Наука“, Москва, 1967, 430 стр., цена 1 р. 35 коп.

Վավերագրեր պոլովեցյան լեզվով, XVI դ. (Կամենեց-Պոդոլսկի հայկական համայնքի դատական արձանագրություններ), «Նաուկա» հրատարակչություն, Մոսկվա, 1967, 430 էջ, գինը 1 ռ. 35 կոպ.:

«Արևելքի մատենագիտության հուշարձանները» շարքի 3-րդ հատորը նվիրված է Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական գաղութի դատարանի նիստերի հայատառ-ղփչաղեղեն արձանագրություններին: Հատորի մեջ զետեղված են ուկրաինացի հայտնի արևելագետ Տ. Ի. Գրունինի վերծանած 298 արձանագրությունների բնագրերը (ոուսերեն տառադարձությամբ), նրանց ոուսերեն թարգմանությունը, ներածություն, բերականական բնագրական ծանոթագրություններ և բացատրություններ: Հատորում տեղ են գտել նաև խմբագիր է. Վ. Սևորոյանի՝ հայատառ-ղփչաղեղեն հուշարձանների հետա-

գոտման պատմությանը նվիրված բնագրական ուսումնասիրությունը և Ճա. Ռ. Դաշկևիչի «Հայկական գաղութը Կամենեց-Պոդոլսկում» ուշագրավ հոդվածը:

Տ. Բ. Գրունինի երկար տարիների քրտնաշան աշխատանքի արդյունք հանդիսացող այս հատորը կարևոր ներդրում է հայատառ-ղփչաղեղեն հուշարձանների ուսումնասիրման բնագավառում. նրա հրատարակած արձանագրությունները հետաքրքրական շատ նյութեր են տալիս Արևելյան Եվրոպայի հայկական ամենախոշոր գաղթավայրերից մեկի՝ Կամենեց-Պոդոլսկի հայ բնակչության իրավական, սոցիալ-տնտեսական

և մասամբ էլ քաղաքական կադրության վերաբերյալ, մի զաղույթ, որը դարեր շարունակ վայելել է դատական ինքնավարության առանձնաշնորհ և դեկավարվել հայկական օրենքներով: Արձանագրությունները որոշ չափով նպաստում են նաև ուկրաինական հինավուրց այդ քաղաքի՝ Կամենիցի իրավա-տնտեսական կյանքի պատկերն ամբողջացնելու, հայ-լեհական և հայ-ուկրաինական հարաբերություններն ուսումնասիրելու գործին:

Այս աշխատությանը Տ. Ի. Գրունինը ձեռնարկել է դեռևս 1930 թ. Ուկրաինական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թուրքագիտական հանձնաժողովի հանձնարարությամբ և նույն թվականին խարկով քաղաքում ուկրաինական արևելագիտության ինստիտուտի լեզվաբանության և գրականագիտության ամբիոնում կարդացել է զեկուցում՝ «Նորահայտ պոլովցյան վավերագրերի մասին» թեմայով: Աշխատությունը, որը հրատարակվելու էր ուկրաիներեն, նա ավարտում է 1935 թ.: Հաջորդ թվականին Գրունինը մեկնում է Թուրքմենիա, այնուհետև՝ Մոսկվա, հետո սկսվում է Հայրենական մեծ պատերազմը և աշխատությունը այդպես էլ լույս չի տեսնում: Բնագրերը, որոնք հիմք էին ծառայել Տ. Ի. Գրունինի աշխատության համար, պահվում էին Կիև քաղաքում՝ Ուկրաինական հանրապետության պետական պատմական արխիվում: 1943 թ. հոկտեմբերին գերմանա-ֆաշիստական զավթիչները Կիևից նահանջելու նախօրյակին թալանում են այդ արխիվը՝ նրա հարուստ ֆոնդերից առանձնացնում մեծ քանակությամբ նյութեր, զխավորապես արձանագրություններ պարունակող զրքեր և երկաթուղային շորս վագոնով ուղարկում դեպի Գերմանիա: Դրանից հետո նրանք պայթեցնում ու հրկիզում են Կիևի համալսարանի շենքը, ուր տեղավորված էր նաև այդ արխիվը: Սովետական զորքերի արագ առաջխաղացումը հնարավորություն չի տալիս նրանց այդ փաստաթղթերը Գերմանիա հասցնելու: Վագոններից երկուսը հայտնաբերվում են Կամենեց-Պոդոլսկ քաղաքի մոտ, մյուսը՝ Չեխոսլովակիայում, չորրորդն ընկնում է Չեխոսլովակիա մտած ամերիկյան զորքերի ձեռքը և 1944 թ. հանձնվում սովետական իշխանություններին:

Սկզբում կարծում էին, թե ոչնչացված նյութերի թվում են նաև Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի բոլոր արձանագրությունները: Այդ մասին մեծ ցավով գրել է նաև գրա-

խոսվող հատորի աշխատասիրողը², բայց հետագայում պարզվեց, որ հայկական դատարանի արձանագրություններ պարունակող 32 մատյաններից անհետացել են միայն 5-ը, մնացածը եղել է փրկված նյութերի մեջ և վերադարձվել Կիև: Դժբախտաբար, այդ անհետացածների մեջ է եղել այն մատյանը, որից օգտվել է Տ. Ի. Գրունինը իր ժողովածուն կազմելու համար: Այսպիսով, ներկա հրատարակությունը ունի նաև մեզ համար շատ թանկագին այդ սկզբնաղբյուրի բնագրի արժեք:

Իր ժողովածուի առաջարանում Տ. Ի. Գրունինը նշում է, որ արտասահմանում ձեռնարկված հայատառ-ղփչաղերեն նյութերի որոնումներն ու հրապարակումները ստիպում են նրան արագացնել ներկա աշխատության լույս ընծայումը՝ արդեն ուսերեն լեզվով, որը հեղինակի հիվանդության պատճառով իրականացնում է նրա դուստրը՝ թուրքագետ է. Տ. Գրունինան:

Անհոռոժեշտ է նշել, որ այդ արձանագրությունների նկատմամբ մեծ հետաքրքրություն է ցուցաբերվել նաև Հայաստանում: Այն բանից հետո, երբ հայտնի դարձավ, որ արձանագրությունների մի զգալի մասը փրկվել է ոչնչացումից, միջոցներ ձեռք առնվեցին նրանց պատճենները Հայաստան բերելու համար: 1958 և 1959 թթ. ընթացքում պահպանված բոլոր մատյանները լուսանկարահանվեցին մանրաժապավենի վրա և այդ պատճեններն այժմ պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում: 1963 թ. Մատենադարանը լույս ընծայեց կամենիցյան դատարանի 632 հայերեն արձանագրությունները ընդարձակ ներածությամբ և ծանոթագրություններով³: Տ. Ի. Գրունինի հրատարակած ղփչաղերեն արձանագրությունների հետ միասին այս նյութերը մեծ հնարավորություններ են ընձեռում պոդոլյան հայերի իրավա-տնտեսական կյանքի պատկերն ամբողջացնելու և հետաքրքրական շատ հարցեր լուծելու համար:

Ինչպես հայտնի է, ղփչաղները (պոլովցիները) չունենին իրենց դիրն ու գրականությունը և նրանց մեռած լեզվի ուսումնասիրությունն այժմ հնարավոր է միայն այլ ժողովուրդների կողմից ղփչաղերեն գրի առնված նյութերի շնորհիվ: Դրանց թվում են «Թուրք-արաբական բառարա-

¹ Український науково-дослідний інститут східознавства, журн. «Східний світ», т. 12, Харків, 1930, էջ 254:

17 Հանդես, № 1

² Т. Н. Грунин. Памятники половецкого языка XVI века, Академику Владимиру Александровичу Гордлевскому к его 75-летию, сборник статей, Москва, 1953, էջ 91:

³ Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները (XVI դ.), աշխատասիրությամբ՝ Վ. Ի. Գրիգորյանը, Եռեփան, 1963:

ներս, որո կազմված է Եգիպտոսում 1245 թ., օՊոլովցեբրեն-ոուսերեն բառարանի» մի հատվածը, վերածննդի հանճարեղ բանաստեղծ Պետրարկայի անձնական գրադարանում հայտնաբերված «Կողեքս կուժանիկուս» ժողովածուն՝ այդ լեզվի խոշորագույն հուշարձանը, որը գրի է առնված 1303 թ. կաթոլիկ միսիոներների կողմից, լատինական այբուբենով և պարունակում է ղփչաղական ֆոնկլորի նյութեր, Հայտնի են նաև ղփչաղերեն լեզվի այլ հուշարձաններ, բայց ուշ շրջանի համար միակ սկզբնաղբյուրը հայերի ձեռքով ստեղծված հայատառ-ղփչաղերեն գործերն են, որոնց մեջ ամենաարժեքավորը Կամենիցի հայկական դատարանի ղփչաղերեն արձանագրություններն են:

Եթե մինչև այժմ տարրեր երկրներում հրապարակված հայատառ-ղփչաղերեն նյութերը Կամենիցյան տարեգրությունները, 50-րդ սաղմոսը, լեհահայոց դատաստանագիրքը, Խիկարի պատմությունը և աղոթագրքի հատվածները հանդիսանում են Պողոսյեի և Գալիցիայի ղփչաղախոս հայերի ինչ-որ չափով մշակված, կարելի է ասել գրական լեզվի հուշարձաններ, ապա Տ. Ի. Գրունինի լույս ընծայած նյութերը միանգամայն անմշակ են, անմիջապես գրի են առնված դատական նիստերի մասնակիցների շուրթերից և չափազանց արժեքավոր են առօրյա խոսակցական ղփչաղերենի ուսումնասիրության համար:

Բանասեր Ք. Ի. Քուչուկ-Հովհաննիսյանի հրապարակած 1559—1567 թվակիր հայերեն արձանագրություններից հայտնի է, որ այդ ժամանակ Կամենիցի հայոց դատարանում պաշտոնապես ընդունված լեզուն հայերենն էր⁴, Տ. Ի. Գրունինի ժողովածուի մեջ մտած ղփչաղերեն նյութերն էլ կազմված են նույն 1559—1567 թթ., ուրեմն կարելի է ասել, որ այդ ժամանակ արդեն դատարանում հայերենին զուգահեռ արձանագրությունները կազմվել են նաև հայատառ-ղփչաղերեն և այս հանգամանքը հավաստում է Կամենիցում մեծ թվով ղփչաղախոս հայերի առկայությունը: Հետագայում, XVI դարի 70-ական թթ., արձանագրությունները կազմվում էին զլխավորապես հայերեն, բայց երբեմն նաև հայատառ-ղփչաղերեն և հայատառ-լեհերեն, ավելի ուշ հայերենը տեղի է տալիս ղփչաղերենին, իսկ վերջինս էլ՝ XVII դ. կեսերից սկսած լեհերենին:

Տ. Ի. Գրունինը մանրագնին քննության է ենթարկել իր հրատարակած արձանագրությունների լեզուն և այդ ուսումնասիրության արդյունքները ամփոփել ծավալուն ներածության

մեջ, որտեղ տրված են նաև պատմական տեղեկություններ կուժան-պոլովցիների (ղփչաղների) վերաբերյալ: Նա հատուկ կանգ է առնում հայ-ղփչաղական առնչակցությունների հարցի վրա, խոսում Արևելյան Եվրոպայի ժողովուրդների հետ պոլովցիների ունեցած կապերի մասին: Նա նշում է, որ Հայաստանում սելջուկների տիրապետության հաստատման ժամանակ պոլովցիները (ղփչաղները) գրավել էին Սև և Կասպից ծովերի հյուսիսային ափերը և այդ կողմերը գաղթող հայերը քաղաքական կախման մեջ էին ընկնում: Նրանցից, «Հայերը,— գրում է Տ. Ի. Գրունինը,— որպես կուլտուրական տարրեր, ոիրով էին ընդունվում քոչվորների կողմից: Նրանք նպաստում էին քոչվորների մոտ առևտրի զարգացմանը և սպասարկում նրանց կուլտուրական տեսակետից: Այսպիսով հայերը, XI դ. երկրորդ կեսից մինչև մոնղոլական արշավանքը (1223 թ.), քաղաքական կախման մեջ են դրոնրվել պոլովցիներից, միասին նահանջել են արևմուտք և ճրանց հետ կապ են ունեցել, մինչև որ պոլովցիներն անհետացել են աշխարհի երեսից: ...Պոլովցիների հետ ունեցած այդ երկարատև կապերի հետևանքով հայերը ստիպված էին սովորել պոլովցիների թուրքական լեզուն, որով նրանք գրում էին նաև XVII դ., երբ պոլովցիները որպես ալդպիսիք արդեն չկային» (էջ 103):

Դեռևս 1921 թ. ֆրանսիական հայտնի ղրփչաղագետ պրոֆեսոր Ժան Դրենին եկել էր այն եզրակացության, որ հայերի ղփչաղերենը իր թուրքական բառապաշարով մոտ է ոչ միայն «Կողեքս կուժանիկուսին», այլև կարաիմների և կուժիկների լեզվին և լիովին գերծ է մնացել օսմանյան թուրքերենի ազդեցությունից, նրա վրա անպայման ազդել է ուլգուրերենը: Տ. Ի. Գրունինը համաձայնելով այս եզրակացության հետ, գրում է, որ հայերի ղփչաղերենը «Կողեքս կուժանիկուսին» լեզվի հետ համեմատած այնքան էլ մեծ տարբերություններ չունի, քերականական կազմը և բառապաշարը հիմնականում նույնն են, ժամանակի ընթացքում փոփոխությունների են ենթարկվել միայն որոշ բառեր և նշյուններ: Աշխատասիրողը նշում է, որ հայկական բաղաձայնների համակարգը և հայկական այբուբենի զարգացած սիստեմը մեծ հնարավորություններ են ընձեռում թուրքական բաղաձայնները հաղորդելիս: «Կողեքս կուժանիկուսին» կազմողները,— գրում է նա,— հայ գրիչների համեմատությամբ ոչ այնքան նպաստավոր վիճակում են, քանի որ որոշ առումով հայկական այբուբենը ավելի մեծ հնարավորություններ է տալիս այս կամ այն թուրքական լեզվի նշյունային առանձնահատկությունները հաղորդելու համար» (էջ 345):

⁴ Խ. Հովհաննիսյանց, Քանի մը քաղվածք, «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1895, հունիս, էջ 203—207:

Աշխատասիրողը մեծ ուշադրություն է նվիրում բնագրերի տառադարձության հարցերին, նշելով, որ ղփչաղերենի տառադարձության խնդրում իր համար շատ օգտակար են եղել հայերեն տառերով գրված ոչ թուրքական, մասնավորապես սլավոնական բառերը, որոնց բնօրինակը նրա մոտ կասկածի տեղիք չի տալիս: Ի տարբերություն իր բոլոր նախորդների, հայատառ-ղփչաղերենի տառադարձման համար Տ. Գրունին օգտագործել է ռուսական այբուբենը, երբեմն էլ դիմելով ուկրաինական որոշ տառերի օգնության: Դժբախտաբար ուսումնասիրողները զրկված են ղփչաղերենի տառադարձության յուրօրինակ այս համակարգը ինչպես հարկն է ստուգելու հնարավորությունից, որովհետև տառադարձված բնագրերին կցված չեն լուսանկարները, ինչ որ վերջերս պարտադիր կարգով անում են հայատառ-ղփչաղերեն բնագրեր հրատարակող բոլոր ուսումնասիրողները: Այդ մասին գրում է նաև աշխատասիրողը և մեծ ցավով ավելացնում, որ այդ թերությունն այլևս անհնարին է ուղղել, որովհետև բնագրերն անհետացել են:

Տ. Գրունինի երկարատև ուսումնասիրության արդյունք հանդիսացող և աշխատության վերջում զետեղված քերականական ծանոթագրությունների բաժնում զետեղված նյութերը շատ օգտակար են լինելու այդ լեզվի ուսումնասիրությանը՝ զբաղվող մասնագետներին: Նա տալիս է հայատառ-ղփչաղերենի հնչյունաբանությունն ու ձևաբանությունը: Մեծ արժեք ունի նաև առարկայական բառացանկը, որը փաստորեն բառարան է՝ բնագրերում զանազան լեզուներով օգտագործված բառերի:

Վերջին տարիներս արտասահմանյան մի շարք երկրներում լույս են տեսել ղփչաղագիտական բազմաթիվ գործեր: Աչքերի ծանր հիվանդությունը հնարավորություն չի տվել Տ. Գրունինին ծանոթանալու դրանց: Այդ պակասը լավագույն ձևով լրացնում է հատորի խմբագիր Է. Վ. Սևորտյանը, որը «Խմբագրի կողմից» վերտառությամբ ծավալուն ներածականում ոչ միայն կանգ է առնում այդ նորագույն հրապարակումների վրա, այլև տալիս է հարցի ուսումնասիրման պատմությունը: մեկ առ մեկ բնութագրում հայատառ-ղփչաղերեն բնագրերի ուսումնասիրմանը նվիրված գործերը: Նա նույնպես մեծ ուշադրություն է դարձնում այն հարցին, թե ինչպե՞ս են մեսրոպյան տառերը հաղորդում ղփչաղերենի հնչյունները:

Տ. Գրունինի աշխատությունը ավելի ամբողջական բնույթ է ստանում Յա. Ի. Դաշկեվիչի հոգովածի շնորհիվ, որը արժեքավորում է հրապարակված արձանագրությունները որպես պատմական ու իրավական կարևորագույն սկզբ-

նաղբյուրներ: Նա համառոտ կերպով կանգ է առնում Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական ղաղութի կաղմավորման և զարգացման պատմության վրա, խոսում Պոդոլյան երկրամասի տնտեսական և քաղաքական կյանքում հայերի խաղացած շատ ակտիվ դերի մասին: Նա իրավացիորեն նշում է, որ հրապարակված արձանագրությունները ուսումնասիրողին շատ նյութեր են մատակարարում ղաղութի անդամների ներքին փոխհարաբերությունների, նրանց առևտրական և գործարար այլ կապերի, առևտրի առարկա հանդիսացող ապրանքների, արհեստների, ուկրաինացի և լեհ բնակիչների հետ հայերի ունեցած փոխհարաբերությունների և այլ հետաքրքրական խնդիրների մասին:

Անհրաժեշտ է նշել, որ կամենիցյան հայոց դատարանի արձանագրությունների թարգմանությունը վերին աստիճանի ղեկավարին աշխատանք է. ինչպես հայերեն արձանագրությունները ողողված են ղփչաղերեն, լեհերեն, ուկրաիներեն բառերով և պարունակում են բազմաթիվ ղեկավարմունքների, երբեմն էլ պարզապես անհասկանալի բառեր, նույնպես և ղփչաղերենում կան շատ օտար բառեր, երբեմն էլ արտահայտություններ: Պետք է հիշել թարգմանչի համառության վրա, որն ի վերջո կարողացել է հաղթահարել բոլոր կարգի ղեկավարությունները և կամենիցյան հայերի խրթին ղփչաղերեն նյութերը մատչելի է դարձրել ուսումնասիրողներին: Ղփչաղերենի մաւնագետները, անտարակույս, պատշաճ գնահատական կտան Տ. Գրունինի կատարած մեծ աշխատանքին: Մենք կուզենայինք այստեղ դիտողություններ անել թարգմանչի թույլ տված մի քանի վրիպումների մասին, որոնք անմիջապես աչքի են զարնում թարգմանությանը ծանոթանալիս:

Յուրաքանչյուր արձանագրության մեջ հորվվում են բազմաթիվ հայերի անուններ, երբեմն տրվում են նրանց հայրանունները. օրինակ՝ «Սարգիսն Զախնոյին որդին», «Ազսէնտն Գոսդային որդին», «Սերհիյն Ռաքին որդին», կամ ուղղակի «Ազսէնտն Պրկոշին» (այսինքն Պրկոշի որդի Ազսենտը) և այլն (տե՛ս հայերեն արձանագրությունները): Ղփչաղերեն արձանագրություններում, բնականաբար, «որդի» բառը ևս գրվում է ղփչաղերեն և թարգմանության ժամանակ, ինչպես բոլոր բառերը, այնպես էլ «որդին» (օզլուն) պետք է թարգմանվեր ռուսերեն (օր. Сергий сын Цахно), բայց թարգմանիչը, ըստ երևույթին բնագրերին ինչ-որ արևելյան կոլորիտ հաղորդելու համար, «որդին» չի թարգմանել ռուսերեն և ամենուրեք անուն-հայրանունով հիշատակված հայերը հանդես են գալիս հայերի համար միանգամայն խորթ և օտարոտի անվանումով՝ «Сергий Цахно-оглу», «Аксент

Коста-оглу», «Сергий Рак-оглу», «Аксент Пиркош-оглу» և այլն: Նույնիսկ մի տեղ էլ «оглу»-ն կցվել է սլավոնական մի անվան՝ «Перед паном войтом... предстал русский Иван Роман-оглу» (էջ 253):

Սխալ է թարգմանված «նեմիչ» բառը: Լեհահայոց վավերագրերում լեհերին անվանում էին նաև «նեմիչ», իսկ գերմանացիներին՝ «նեմեչ»: Այս բանին անտեղյակ թարգմանիչը ամի-նուրեք «նեմիչը» թարգմանել է «գերմանացի» և տեղիք տվել թյուրիմացությունների: Այսպես, 1559 թ. հոկտեմբերի 7-ին հայոց դատարան է դիմում «Немич војту Зысканы», այսինքն լեհ վոյթ Զիսկանը: Թարգմանության մեջ ստացվել է գերմանացի վոյթ (էջ 243), մինչդեռ Կամենիցում երբեք գերմանական վոյթ չի նստել, այլ միայն լեհական, ուկրաինական ու հայկական: Բացի այդ, լեհական՝ «նեմիչի» հաշվով տրված դրամական միավորները թարգմանված են «по немецкому расчету», այստեղից էլ բնականաբար խառնաշփոթություն է ստեղծվում այն ժամանակ ընդունված դրամական կուրսեր որոշելու Յա. Ռ. Դաշկեիչի հաշիվներում (էջ 83):

Բնագրերում հաճախ հանդիպող «орус» բառը պետք է հասկանալ ուկրաինացի, բայց թարգմանված է ռուս (русский Изашко, русский Мишко և այլն), ուկրաինական ավագները դարձել են «русские старшины», իսկ մի այլ տեղ էլ մեկ այլ սխալի պատճառով Ռոմաշկան, Սառուկը, Պետրոսը և Յուրկոն, որոնք ամենուրեք հիշատակվում են որպես հայկական դատարանի ավագներ (դատավորներ), դուրս են բերված «польскими старшинами» (էջ 295):

Կա տերմինների որոշ շփոթություն. օրինակ՝ «тамгаджи», որ նշանակում է մաքսատան պաշտոնյա, և «мандавак», (մանկտավագ) (եթիտասարդական կազմակերպության՝ «Կտրիճ-վորաց եղբայրության» ավագ, ղեկավար) բառերը դիտվում են որպես հատուկ անուններ և անգամ մտել են անձնանունների ցանկի մեջ: Լավ կլինեք, որ հայոց թվականության հետ զուգահեռ, փակագծերի մեջ, տրվեք նաև ներկա թվականությունը:

Մի քանի խոսք առաջարկներում տեղ դրած վիճելի և ոչ ճիշտ հարցերի մասին:

Զի կարելի համաձայնվել Յա. Ռ. Դաշկեիչի հետ, որը տողատակի մի ծանոթագրության մեջ անվստահելի է համարում Ստեփանոս Ռոշթայի «Ժամանակագրության» տեղեկությունն այն մասին, որ դեռս 1350 թ. Կամենիցի հայերը

մահվան պատիժ իրագործելու իրավունք ունեին (էջ 72): Արժանահավատ և վստահելի մի այդպիսի հեղինակի տեղեկությունը, ինչպիսին Ստեփանոս Ռոշթան է, կասկածելի համարելու համար անհրաժեշտ էին հիմնավոր փաստարկումներ, մինչդեռ Դաշկեիչը ոչ մի փաստ չի բերում: Դաշկեիչը շափազանցված է համարում ոչ միայն լեհահայ պատմաբան Սադոկ Դարոնչի տվյալները XVI դ. Կամենիցի հայ բնակչության թվի մասին (900 ընտանիք), այլև վենետիկյան դեսպան Լիպպոմանի վկայությունը (300 ընտանիք): Մինչդեռ իր բերած տվյալները վերաբերում են Կամենիցում և Պոդգորնոյե արվարձանում եղած տների (645 տուն՝ 1570 թ.) և ոչ թե բնակիչների քանակին: Կամենիցում ժանտախտի համաճարակը եղել է ոչ թե 1558 թ. (ինչպես նշում է հոդվածագիրը, էջ 76), այլ 10 տարի հետո, ձիշտ չէ Տ. Ռ. Դրունինը, երբ գրում է, թե Կամենեց-Պոդոլսկի հայկական դատարանի արձանագրությունները պատերազմի ժամանակ տեղափոխվել են Հայաստան (էջ 60):

Ոոսելով հայատառ-ղփշաղերեն բնագրերի հրապարակումների մասին, խմբագիր է. Վ. Խեվրոտյանը գրում է, թե այդ հրապարակումներն ունեն 70 տարվա պատմություն, որպես առաջին հրապարակողի նա նշում է Ղ. Ալիշանին (էջ 15): Սակայն Ալիշանից 66 տարի առաջ հայատառ-ղփշաղերեն բնագրեր է հրատարակել Մինաս Ժշկյանը: Իր մեծարժեք «Ծանապարհորդություն» մեջ նա քաղվածաբար հայատառ-ղփշաղերեն նյութեր է հրատարակել Լվովի ժամանակագրությունից, Լվովի և Կամենիցի հայկական դատարանների արձանագրություններից, ինչպես նաև հարսանեկան մի պայմանագրից (1578, 1579, 1585 թթ.)⁶:

Վերջում անհրաժեշտ է նշել, որ Տ. Ռ. Գրունինի հրատարակած հայատառ-ղփշաղերեն արձանագրությունները ավելի կմեծացնեն հետաքրքրությունը զփշաղների մեռած լեզվի նկատմամբ, նոր թափ կհաղորդեն նրա հետազոտման գործին, շափազանց արժեքավոր կլինեն հայկական այդ հինավուրց գաղթավայրի պատմության հետազոտումնասիրման համար:

Վ. ԳՐԻԴՈՐՅԱՆ

5 Ղ. Ալիշան, Կամենից, Վենետիկ, 1896, էջ 36:

6 Մ. Բ ժշկյան, Ծանապարհորդություն ի լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 114, 117—118, 157—158: